

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱԽՕՍԼԱԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Нов. Время-ի թղթակիւններից մինը հարց բարձրացրեց շե-
 քաւոր Արեւելքում պատերազմին զոհ գնացածներէ յիշատակն
 անմահացնելու մասին և առաջարկեց նրանց անուններն ու
 ազգանունները փորագրել իրենց ծխական եկեղեցիներում յա-
 տուկ մետաղեայ կամ փայտեայ սախտակներէ վրայ:

Թղթակիցը գտնում էր, որ դա արժանաւոր դնահատու-
 թիւն կլինի հայրենի համար իրենց անձը զոհողներէ և յետ-
 նորդ սերնդին էլ գեղեցիկ դաս և ոգևորիչ օրինակ:

Церк. Вѣстникъ շաբաթաթերթն այդ առաջարկութեան
 առթիւ գրում է հետևեալը.— Պէտքէ ասենք, որ թղթակցի
 առաջարկութիւնը չափազանց դժուար իրագործելի է և այդ
 հետևեալ պատճառներով. նախ այն, որ քաղաքներում ծխերը
 որոշ և կանոնաւոր բաժանուած չեն և նրանց համար որոշ շքո-
 ջանակ չի գծուած, հետևապէս միևնոյն մարդու անունը յան-
 կարճ կարող է մի քանի անգամ արձանագրուել. և երկրորդ
 ծխական եկեղեցիներում, եթէ այդ սովորութիւնը մտնելու լինի,
 պատերին ազատ տեղ չի մնալ: Այս պատճառով թերթն առա-
 ջարկում է առանձին մատեաններ մտցնել և այնտեղ արձանա-
 գրելով պատերազմում ընկածների անունները, տարեկան մի
 քանի անգամ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել և կարգալ
 բարձրաձայն յիշատակութեան ամբողջ տեսրակը:

Մեր կողից յիշեալ առաջարկութեան և պատասխանի
 մասին կը յայտնենք հետևեալ համեոտ կարծիքը.—

Պատերազմի դնացածներից բոլորը հերոսական մահով և
 քաջաբար չեն մեռնում, ինչպէս և հայրենիքում մնացածներից
 լինում են պատերազմում սպանուածներից աւելի անձնուէր և
 անձնազոհ մշակներ իրենց հայրենիքի: Ինչպէս պատերազմի
 հերոսներին, այնպէս էլ հայրենիքի անձնազոհ և աշխատաւոր
 մշակներին պատմութիւնն ինքնին անմահացնում է և եթէ եկե-
 ղեցին պէտքէ գլխաւոր նախաձեռնող և մարմին լինի այդ
 խնդրում, ապա նա այդ դէպքում փէտքէ վարուի շաա զգու-
 շաւոր կերպով և իւր սօնելի անձանց կենսազրահանի հետ էլ

ծանօթ և տեղեակ պահի ծաղովըզին, որ ոչ մի դէպքում զուք
և անտեղի մեղադրանքի չըհանդիպի և ոչ սքի կողմից:

— ЦѢРК. ВѢСТНИКЪ-ի № 15-ում, բերում է Յուլիոյի թե-
մական տեղեկագրից քաղած հետեւեալ լուրը.

«Ինչպէս սովորութիւն է, այս տարի էլ զատկին անօրհնէքի
չըջելիս քահանաներից մինը իւր տիրացուի հետ երբ մտնում է
շտաաի գիւղերից մինը, տեսնում է, որ գիւղական գինեաան
գոները դժոխքի նման լայն բացուած, հաւաքուել են նրա մօտ
հասակաւորներն ու պատանիները, որոնցից մի մասը պառկած,
միւսները նստած, բայց բոլորն էլ հարբած՝ ճպրտա ու մարած
աչքերով նայում են քահանային: Ծեր տիրացուիս ըստ երևոյթին
շտա սովորական քան թուաց այդ երևոյթը, բայց ես խորապէս
վշտացած, անկարելի համարեցի պատկերներով մտնել այդ վի-
ճակում գտնուած գիւղացիների տներն ու օրհնել: Աւստի քայ-
լերս ուղղեցի յետ՝ դէպի ծխահան եկեղեցին և հրամայեցի դար-
սել այնտեղ պատկերներն իրենց տեղերում: Գիւղացիներից
երկու երեք հօգի, որոնք աւելի քիչ էին խմել, ընկան ետեւիցս,
բայց ես առանց երկարաբանելու՝ կարճ բացատրեցի այդպէս
վարուելուս բուն պատճառը, որը նրանց շտա անսովոր թուաց,
և շտապեցի դէպի տուն: Երկրորդ օրը՝ վաղ առաւօտեան այդ
գիւղից ինձ մօտ եկան մի քանի բոլորովին սթափուած մարդիկ,
որոնք վերին աստիճանի վրդովուել էին պատահած դէպքի
առթիւ.— «Տէր հայր, ինչու անպատուեցիր ու վիրաւորեցիր
մեզ» չէ՞ որ մենք էլ ամօթու ուրիշ տեղ անցնել չենք կարողա-
նայ ու ծաղրի առարկայ պէտքէ դառնանք».— ասացին նրանք:
Ես այդ բարեյաջող դէպքից իհարկէ օգուտ քաղեցի, բացատ-
րեցի նրանց իրենց վարմունքի անպատուաբերութիւնը և մի-
ւնոյն ժամանակ աւելացրի, որ իրենց մօտ աներ օրհնելու կեր-
թամ միայն այն ժամանակ, երբ նրանք կըխօտանան, որ թէ
տանը և թէ փողոցում վայելուչ կը լինին ամենքը և հար-
բածներին չեմ հանդիպիլ: Նրանք ամենայն պատրաստակամու-
թեամբ տուին այդ խոստումը և խնդրեցին, որ հէնց հետեւեալ
օրն երթամ իրենց մօտ: Եւ իրաւ, երբ ես երկրորդ անգամ
այցելեցի այդ գիւղը, նախկին անկարգ կացութեան հետքն
անգամ չէր մնացել. գինեատունը փակ էր և ոչ մի տեղ հարբած
մարդ չըկար: Թեթև խմածներն, իհարկէ, հանդիպում էին, մի
քանի տներում տան տէրերը բացակայ էին, որոնց երեւի ծած-
կել էին ինձանից, բայց ես ընտանաբար չէի էլ սպասում, որ
գիւղն յանկարծ և բոլորովին սթափուէր: Առաջին անգամ ինձ
բաւական էր և այն, որ գիւղացիք անօրհնեաց ժամանակ ամա-

չեցին հարբած երևալ ինձ: Այդ արդէն մի յաջողութիւն էր նախկին դրութեան համեմատութեամբ:

Թերթը նկատու՞մ է, որ տօնական հարբեցութեան դէմ կարելի է կռուել այդ ձևով, բայց պէտք է խիստ հետևողական լինել և տնօրհնէքն հանդարտ և ջերմեռանդութեամբ կատարել, որ ծխականները վրայ որոշ ապաւորութիւն թողնի և արտունջի առիթ չտայ:

— Յայտնի է, որ մեզնումն էլ վերջին տարիներս մեծ չափ և ծաւալ է ստացել հարբեցնող նիւթերի գործածութիւնը՝ օղին գինին և ծխախոտը. և մեր գիւղերում այժմս հարբած խմբեր տեսնելը շատ սովորական երևոյթ է դարձել: Գլխաւորապէս տարածուել է օղու և ծխախոտի գործածութիւնը և պէտքէ ասած, որ մեր գիւղական հոգևորականութիւնը ոչ միայն չի մաքառում այդ բարոյապէս և տնտեսապէս քայքայող սովորութեան դէմ, այլ միանգամայն անվրդով մասնակից է լինում ամեն տեսակ կեր ու խումին: Հարբեցութիւնը յանցանք է Աստուծոյ և մարդկանց առաջ և պատահած չարութիւնները արժատը: Աւետարանը մի քանի տեղ ուղղակի արգելում է խմելն ու հարբելը, բայց չգիտենք, թէ ինչ հիման վրայ գինու իբրև սովորական խմիչքի գործածութիւնը համարուել է քրիստոնէութեան նշան: Յանկալի է, որ խիստ մաքառումն սկսուի այդ ամենամեծ արատի դէմ և մեր հոգևորականներն էլ աշխատեն՝ ոչ թէ միայն փախչիլ հարբեցնող նիւթերի գործածութիւնից, այլ և բացատրեն իրենց ծխականներին, որ գինին՝ հաղորդութեան նիւթ լինելուց յետոյ, չի կարող հարբեցութեան սովորական նիւթ և խմելիք լինել: «Արարատի» մօտակայ համարներից մինում մենք կը դառնանք այդ խնդրին և կաշխատենք ցոյց տալ, թէ որչափ սխալ են հասկացուած քրիստոնէական կրօնի պահանջներն այդ մասին:

Թեմական դպրոցները նոր դերը: Ֆոմէնկօ քահանան Ս. Վ. ВѢСТНИКЪ-ի սոյն տարուայ № 9 ում ինտելիգէնտ դասակարգի եկեղեցուց օտարանալն առաւելապէս վերագրում էր այն բանի, որ ընտանիքներում մանուկների դաստիարակութիւնն յանձնւում է օտարազգիներին: Ար այդ նկատողութիւնը միանգամայն արդարացի է, դորանում ոչ մի կասկած չկայ և ոյ որ փոքր ինչ նեղութիւն է տուել իրեն գիտելու մեր կեանքը, նա անշուշտ նկատած կլինի, թէ ինչպէս աստիճանաբար, տարէց տարի վերադաստիարակում է երիտասարդ սերունդը ռուսա-

կան ժողովրդի հարուստ ընտանիքներում: Համոզմունքների և սովորութիւնների «վերափոխութիւնը» կատարուում է դանդաղ, բայց աստիճանաբար:

Մի՞թէ այդ խոշոր փաստը չէին նկատում մեր հոյիւններն ու հոյուեպեանները: Նրանք ինչ էին անում այդ օտարահաւատութեան կործանիչ ազդեցութիւնը ոչնչացնելու մեր աճող սերնդի մէջ:

Մեր երկրում կար մի շատ կրթուած առաջնորդ, որն այժմս հանդուում է յաւիտենական քնով և որի սիրտը մեծ ինդիւրներ լուծելու համար արնում ու կսկծում էր: Գա Սամարայի առաջնորդ Սերաֆիմն էր, որ սրանից 20 տարի առաջ համարուում էր կենսատու մի երեւոյթ և իւր մեծ խելքով ցոյց տուեց այն ուղին, որտեղ գտնուում է Ծօմէնիօ աւագ քահանայի հարցի պատասխանը

Նա այդ հնարաւոր էր համարում գիտութեան և հաւատոյ, քաղաքակրթութեան և կրօնի, հոգեորականութեան և ինտելիգենցիայի հաշուութեամբ և այդ հոգեորականութեան և նրա դաւախների՝ մանաւանդ իգական սեռի վերակրթութեամբ: Նրա բոլոր ջանքն ու հոգսը ուղղուած էր այն բանի, որ հոգեորականներին խելացի կեանքի ցանկալի բարձրութեան հասցնի: Եթէ մենք տեսնում ենք օտարների դատախարակութեան ամբողջ վնասը, հայր Սերաֆիմը շատ գեղեցիկ կերպով նկատում էր, թէ ինչպէս կրթ և հարուստ ուսու դատախարգը երես էր դարձնում իւր անկրթ հոգեորականութիւնից, ինչպէս որ նա այժմս էլ մնացել է ոչ միայն դիւզերում, այլև քաղաքներում՝ շատ սակաւ բացառութեամբ: Արբաղն Սերաֆիմն իւր կենդանութեան ժամանակ կարողացաւ Սամարա քաղաքում նոր սգով և ուղղութեամբ կրթել հոգեորականների դաւախներին, գտնէ նա մեծ ուշադրութիւն էր դարձնում այն բոլոր գիտելիքների վրայ, որոնց չգիտենալն այդպէս ընազգաբար զինում է հոգեորականների դէմ մեր «կանոնաւոր» հասարակութեան անգամներին: Այդ եպիսկոպոսին է պարտական ահա Սամարայի թեմը, որ այնտեղի հոգեորականութիւնը մինչև օրս էլ յարգանք է վայելում տեղական կրթուած դատախարգի կողմից:

Հանգուցեալ Սերաֆիմ եպիսկոպոսին չարիագանց շատ էր զբաղեցնում ընտանեկան դատախարակչօհիւնների և մանկախնամների գործը ազնուական ընտանիքներում: Նա ծրագիր կազմեց և առանց մէկին բան տեսլու, հէնց ինքն անձամբ սկսեց նրա կրագործումն, որպէս զի ուրիշներն աւելորդ արանութեամբ գործը չբխառէին:

1877 թուին՝ Սամարայի առաջնորդ նշանակուելուց յետոյ անմիջապէս՝ Սերաֆիմը զբաղուեց Սամարայի թեմական օրիորդաց ուսումնարանի բարեկախութեամբ, մօտեցրեց նրա ծրագիրը օրիորդաց գիմնադիօնների ծրագրին, իսկ դաստիարակութեան դործն էլ օրիորդաց ինստիտուտների ձևին: Այդ գործում նրան օգնեցին դպրոցում պաշտօն ունեցող բոլոր անձինք, մեծապէս նպաստեց դպրոցի տեսչուհին, որը լաւագոյն ազնուական ընտանիքի անդամ էր և ընտանեկան ամենալաւ սկզբունքներով մեծացած:

Սրբազան Սերաֆիմը հէնց որ տեսաւ թեմական օր. դպրոցի աշակերտութիւնների ընտանեկան դաստիարակչութեամբ պաշտօնի համար պատրաստուած լինելն, իսկոյն սկսեց գետեղել նրանց այդ պաշտօնով Սամարայի ազնուականների ամենալաւ ընտանիքներում: Բայց այն ժամանակ դեռ ոչ ոք չըճատկացաւ, թէ ինչ մեծ գործ էր սկիւլ այդ եպիսկոպոսը, որի մասին ոչ թէ միայն անհաւատալի պատմութիւններ էին շարագրում, այլ և այդ պատմութիւնները մէջ եպիսկոպոսի արածները բոլորովին ուրիշ կերպ էին լուսարանում: Չըճատկացան նոյն իսկ, թէ ինչու սրբազանը թեմական օրիորդաց ուսումնարանում երաժշտութեան դասաւանդութիւն մտցրեց, ինչու ընդարձակեց մաթեմատիքական առարկաների ծրագիրը, ինչու մտցրեց ֆրանսիական լեզուն և ուսուցչական պաշտօնի համար ինչու համալսարանական և ճեմարանաւարա մարդկանց հրաւիրեց:

Թեմական դպրոցում քսանամեայ պաշտօնավարութիւնիցս քաղած լիործովս թոյլ կրամ մի ինձ ասել, որ այդ դպրոցները պարտաւոր են եկեղեցուն և հայրենիքին մատուցանել այն ծառայութիւնը, որի վրայ մասնանիշ եղաւ Ռուսաստանի եպիսկոպոսներից մէկը:—Ներկորդ, որ այժմս թեմական դպրոցներն առանց գործի են մնացած, որովհետեւ գիւղական ուսումնարանների համար վարժուհիներ պատրաստելու գործով այժմս եռանդուն կերպով զբաղոււմ են նաև զանազան եկեղեցական ուսուցչանոցներ:

Թեմական դպրոցներին պէտքէ ապլ աւելի վսեմ և իրենց գիրքին համապատասխան այնպիսի մի գործ, որը պարտաւոր է կատարել կրթութեամբ օրիորդը յօդուտ եկեղեցու և հայրենեաց:

—Նրբ այսպէս է նայում ընտանեկան դաստիարակչութիւնների խնդրին ռուս հոգևորականութիւնն ու եկեղեցական շաբաթաթերթը, երբ նա բաւական չի համարում իւր հազարաւոր դպրոցների և դաստիարակների ազդեցութիւնը և պահանջում է Սերաֆիմ եպիսկոպոսի գծած ծրագրով պատրաս-

տած մանկախնամներ և դաստիարակչուհիներ, սրբան աւելի
 դգալի է մեղանում հանոնաւոր ընտանեկան վարժուհիների
 կարիքը: մեղանում, ուր երեկուայ ազէա զիւղացին, խղճուի և
 անաաշ գեղճիուհին, կոպիա զարաբաղցի, շամախեցի կամ առ-
 հասարակ դաւառացի կինը՝ բաղդի բերմամբ փոքր ինչ հարց-
 տանալով, սկսում է բարբարոտաբար սլլանդակ օտարախօսու-
 թիւնն ու անպատճառ «փրանցութանկայի» և «նեմիայի»
 է ման գալիս իրեն և իւր գաւակներին քաղաքակրթելու:

Ահա մի սուրբ և շատ վսեմ գործ, որի վրայ հրաւիրում
 ենք այն մեծախօս հայրենասէրների ուշադրութիւնը, որնք
 հեռուներումն են տեսնում իրենց հայրենասիրութիւնն ու
 եկեղեցասիրութիւն արտայայտելու գործը: Ճիշտ է այստեղ
 ճաճան ճառերի և տրաքոցների տեղ չկայ, բայց սրբան հա-
 մեսա, մեծ և բեղմնաւոր գործ է խիական աշխատաւոր մե-
 ղունների համար:

Церк. Вѣст. № 18 գրուած է հետևեալը.—

Հեռաւոր Արևելքում մեր զօրքերի շարքում պրաւօսլաւ,
 հնապաշտ (Старообрядецъ) և աղանդաւոր զինուորների հեռ
 հաւատարմութեամբ և ճշմարտութեամբ ծառայում են կայսեր
 և հայրենիքին հաղարաւոր կաթոլիկ, բողոքական և այլադաւան
 զինուորներ: Պատերազմական գործողութիւնները սկզբից հարց
 յարուցուեց Հեռաւոր Արևելք ուղարկելու կաթոլիկ, բողո-
 քական և մասմէդական հոգևորականներին, որպէս զի նրանք
 կարողանան կրօնական մխիթարութիւն և օգնութիւն հասց-
 նել վիրաւոր և առողջ զինուորներին: Լրագիրները տուած
 տեղեկութիւնները համաձայն կաթոլիկ քահանան արդէն նշա-
 նակուած է բանակում և շուտով կը նշանակուի նաև բողոքա-
 կան պատօրը: Բացի զբանից կարմիր խաչը հիւանդանոցներում
 կը նշանակուեն նաև լիտովցի ու կաթոլիկ երկու քահանաներ:

ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կարոլիկ եկեղեցւոյ կանոնական իրաւունքի վերագնուրիւնը
 եւ կարգի բերելը:

Պիոս X պապը հրամայել է կարգի բերել կաթոլիկ եկե-
 ղեցւոյ կանոնական իրաւունքը, որը քրիստոնէութեան առա-
 ջին դարերից սկսած՝ հասնում է մինչև մեր օրերը: Պապի
 այդ նպատակաւ հաստատած կարգիւնալիները մասնաժողովը